ՀՖՖ Նախագահի ծրագրային հայտարարությունը 2010/2011 թվականների ակումբների արտոնագրման մրցաշրջանի համար

Հարգելի տիկնայք և պարոնայք,

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան այս հայտարարությամբ սկսում է իր՝ ակումբների արտոնագրման համակարգի թվով 7-րդ մրցաշրջանի աշխատանքները, որոնք վերաբերում են ՀՖՖ-ի 2010 թվականի և ՈՒԵՖԱ-ի 2010/11 թվականների մրցաշրջաններին:
Այս անգամ, ինչպես և նախորդ երկու մրցաշրջանում, արտոնագրման ընթացակարգին կմասնակցեն ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին հանդես գալու իրավունք ստացած ակումբներն ու ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակից բոլոր 8 թիմերի մայր-ակումբները: Այս մրցաշրջանում արտոնագրման գործընթացին առաջին անգամ կմասնակցի Դիլիջանի «Էրեբունի-Դիլիջան» ակումբը, որի «Իմպուլս» թիմը իր նորամուտն է նշելու ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությունում: Արտոնագրերն իրավունք կընձեռեն ակումբներին՝ մասնակցելու ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին և ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը:
Ակումբների արտոնագրման գործընթացը բավական բարդ և տքնաջան աշխատանք պահանջող համակարգ է: Նախորդ տարիների ընթացքում այն անցել է ինքնահաստատման, կայունացման և ամրապնդման դժվարին ճանապարհ և այժմ հանդիսանում է ՀՖՖ գործունեության զարգացմանը նպաստող կարևորագույն ստորաբաժանումներից մեկը:
Այդ կապակցությամբ ես իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում այն անձանց, ովքեր այս կամ այն կերպ իրենց մասնակցությունն են ցուցաբերել ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի կայացման գործում:
Նախորդ մրցաշրջանի վերջնամասում ՀՖՖ Արտոնագրման բաժինը կրկին բարեհաջող անցավ շվեյցարական SGS ընկերության կողմից իրականացվող ամենամյա աուդիտը: Անցկացված ստուգումը կրկին ապացուցեց ՀՖՖ արտոնագրման բաժնի և արտոնագրման համակարգի բարձր կարգն ու որակական հատկանիշները, ինչպես նաև համակարգի ձգտումը միջազգային ստանդարտներին:
Հիմնվելով արդեն իսկ արձանագրված դրական արդյունքների վրա, ճիշտ եմ համարում արտոնագրման համակարգի շրջանակներում ՀՖՖ՝ նախորդ տարիների ընթացքում սահմանված քաղաքականության իրականացման շարունակությունը, այն է՝

Արտոնագրման համակարգի նկատմամբ ակումբների կարիքների և ակնկալիքների բավարարում,

ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի արդյունավետության մշտական բարելավում,

ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի աշխատակցի Վարքագծի Կանոնագրքի դրույթների անշեղորեն պահպանում,

ՀՀ օրենսդրության, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնների անշեղորեն պահպանում:

Բնականաբար, տարվող ցանկացած քաղաքականություն ենթադրում է իր շրջանակներում առկա որոշակի նպատակային խնդիրներ, որոնց լուծման ճանապարհները դրված են ՀՖՖ Արտոնագրման բաժնի և համակարգի առջև: Այդ նպատակային խնդիրներն են՝

Բազմակողմանի օժանդակություն արտոնագրվող ակումբներին՝ ՀՖՖ Ուղեցույցի (Տարբերակ 3.0) պահանջների կատարման հարցում, ինչը թույլ կտա նրանց մասնակցել ինչպես 2010 թվականի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը, այնպես էլ ՈՒԵՖԱ-ի 2010/2011 թթ. մրցաշրջանի ակումբային պաշտոնական մրցաշարերին,

ՈՒԵՖԱ-ի կողմից հրատարակված ակումբների արտոնագրման Կանոնակարգի տեղայնացում և համապատասխանեցում ակումբների արտոնագրման ազգային համակարգին,

ՈՒԵՖԱ-ի որակի Ստանդարտի (Տարբերակ 2.0) պահանջների անշեղորեն կատարում, ինչը թույլ կտա 2010 թվականին ևս հաջողությամբ անցնել շվեյցարական SGS ընկերության կողմից անցկացվող ստուգումը,

Սերտ համագործակցություն ՀՖՖ Ուսումնամեթոդական բաժնի հետ՝ Հայաստանում համաեվրոպական մարզչական կոնվենցիայի դրույթների իրականացման հարցում,

Նախապատրաստական աշխատանքների իրականացում՝ մոտ ապագայում (մոտավորապես 2011թ.) աշխատանքներն ամբողջովին ISO-9001:2008 միջազգային ստանդարտին համապատասխանեցնելու նպատակով, ինչը թույլ կտա առավել բարձրացնել հայկական ֆուտբոլային մենեջմենթի վարկանիշը Եվրոպայում,

ՀՀ ֆուտբոլային մարզակառույցների արդիականացում, ինչը թույլ կտա դրանք դարձնել հնարավորինս հարմարավետ և անվտանգ,

ԶԼՄ-ներում արտոնագրման համակարգի, նրա խնդիրների և նպատակների առավել լայնածավալ լուսաբանում՝ այն ավելի հասկանալի դարձնելու համար ֆուտբոլային հանրությանը,

Աշխատանքների լիակատար վերահսկում, դրանց մշտական բարելավում և անհրաժեշտ փոփոխությունների կիրառում՝ համակարգի բնականոն և անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:
Կարևոր եմ համարում նշել, որ 2010/11 թվականների մրցաշրջանում արտոնագրման գործընթացին մասնակցող ակումբները կարող են ակնկալել ՀՖՖ Արտոնագրման բաժնի մասնագետների բազմակողմանի աջակցությունը՝ արտոնագրման համակարգի պահանջների կիրառման և իրականացման հարցում:

ՀՖՖ Նախագահ
Ռ. Հայրապետյան